600.0431.20.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2019 թվականի №431Ա

ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2017 թվականի դեկտեմբերի 15-ին տրամադրվել են №ՏՊ-570-110/0258 ԷԷՀ-ին միացման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ Տեխնիկական պայմաններ)՝ «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանի միացման կետ նշելով «Դավիթ Բեկ» 110 ԿՎ օդային գծի №61 խարսխային հենարանը,

բ) ի պատասխան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի №ԿՍ/34.1-Ղ4-2/2640-19 գրության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2019 թվականի հոկտեմբերի 9-ի №386-19 գրությամբ հայտնել է, որ «Դավիթ Բեկ» 110 ԿՎ օդային գծի №61 հենարանը պատկանում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, իսկ «Դավիթ Բեկ» 110 ԿՎ օդային գիծը մինչև «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության վարկային ծրագրով №49-№117 հենարանների միջև ընկած հատվածի տեղափոխումը ամբողջությամբ գտնվել է ընկերության հաշվեկշռում, միևնույն ժամանակ հայտնել է, որ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ նշված հատվածը հանձնելու «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռ,

գ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2019 թվականի հոկտեմբերի 17-ից հարուցել է վարչական

վարույթ՝ Տեխնիկական պայմանները հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 27-ի №314Ն որոշմամբ հաստատված՝ բաշխման ցանցին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների հնարավոր խախտմամբ տրամադրման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) վարչական վարույթի շրջանակում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2019 թվականի հոկտեմբերի 25-ի №411-19 և նոյեմբերի 11-ի №439-19 գրություններով հայտնել է, որ Տեխնիկական պայմանները տրամադրվել են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինքն է օպերատիվ կառավարում և շահագործում «Դավիթ Բեկ» 110 ԿՎ օդային գիծը և, առաջնորդվելով Կարգի 2.5-րդ կետի պահանջներով (միացման աշխատանքները նվազագույն ծախսումներով իրականացնելու պայմանով), ինչպես նաև ստանալով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության բանավոր համաձայնությունը, որը հիմնավորվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական տնօրենի 2018 թվականի հունիսի 18-ի №1-03/693 գրությամբ և 2018 թվականի հուլիսի 16-ի №1-01/96 կարգադրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը սույն թվականի նոյեմբերի 5-ի №01/1453-19 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ 32,3 կմ երկարությամբ «Դավիթ Բեկ» 110 ԿՎ օդային գծի միայն 12,3 կմ հատվածն է գտնվում վերջինիս հաշվեկշռում, նշված օդային գծի օպերատիվ կառավարումն ու ղեկավարումն իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից, իսկ «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանի դրվածքային հզորությունը կազմում է 7,7ՄՎտ և չի հանդիսանում որակավորված արտադրող, ինչպես նաև այն, որ Կարգի 2.5-րդ կետի պահանջի համաձայն միացման աշխատանքները պետք է կատարվեն նվազագույն ծախսումներով իրականացնելու պայմանով, վերջինս չի խոչընդոտել «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանի ցանցին միացումը,

զ) վարչական վարույթի ժամկետը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը 10 օրով երկարաձգվել է,

է) Կարգի 2.1-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձի էլեկտրական ցանցին նոր կայանների միացման աշխատանքների նախագծերը մշակելու համար անհրաժեշտ տեխնիկական պայմանները կառուցողին առաջադրում է բաշխողը,

ը) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների (այսուհետ՝ Ցանցային կանոններ) 190-րդ կետի համաձայն՝ հաղորդման ցանցին հզորություն միացնելու իրավունք ունեն որակավորված արտադրողը, բաշխողը և որակավորված սպառողները, իսկ Ցանցային կանոնների 3-րդ կետի 46-րդ ենթակետի համաձայն՝ որակավորված արտադրող է համարվում 10 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը, որպիսին «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը չի հանդիսանում,

թ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը խախտել է Կարգի 2.1-րդ կետը, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ Ցանցային կանոնների 190-րդ կետը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 9-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 2.1-րդ կետի խախտման համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը նախազգուշացնել:
2. Ցանցային կանոնների 190-րդ կետի խախտման համար «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը նախազգուշացնել:
3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնհինգօրյա ժամկետում համատեղ քննարկել և Հանձնաժողով ներկայացնել

Տեխնիկական պայմանները Կարգի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկություն:

4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու են սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
20 նոյեմբերի 2019թ.